## Արձանագրություն N 3

## <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/11>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով իրականացվող ընթացակարգի գնահատողի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 08 նոյեմբերի 2016թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Խոջայան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բայբուրդյան /գնահատող/ Ն. Քեռյան /գնահատող/, Շ. Իսախանյան /բացող/ Ա. Աշուղյան /բացող/,

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

### 1. Տեղեկություններ <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/11>> ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

---

(Ռ. Խոջայան)

Հայտերը բացվել են ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկի վարչական շենքում, 2016 թվականի նոյեմբերի 7-ին ժամը 14:30-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 2. <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/11>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

---

(Ռ. Խոջայան)

Ընդունել ի գիտություն, որ էլեկտրոնային համակարգով շրջանակային համաձայնագրերի միջոցով իրականացվող ընթացակարգին առգիծ հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ |
| 2 | <<ՍԵԳ>> ՍՊԸ |
| 3 | <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ |
| 4 | <<ՏԵԽՆՈԼԱԲ>> ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 2.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

---

(Ռ. Խոջայան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

| Համակարգչի կոշտ սկավառակ | | | | | | Նախահաշվային գին |
|---|---|---|---|---|---|---|
| Մասնակցի անվանումը | Առաջարկած գինը | | | | | |
| | Ինքնարժեք | Շահույթ | Առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր | |
| <<ՏԵԽՆՈԼԱԲ>> ՍՊԸ | 29450 | 1550 | 31000 | | 31000 | **70 000** |
| <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ | 42500 | 7500 | 50000 | 10000 | 60000 | |
| <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ | 54540 | 6060 | 60600 | 12120 | 72720 | |
| <<ՍԵԳ>> ՍՊԸ | 71000 | 5000 | 76000 | | 76000 | |

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան անճշտություններ:

**3.Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին**

---

(Ռ. Խոջայան)

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,

3.2 <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ի և <<ՍԵԳ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

3.3 <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ -ի կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում գնային առաջարկում, նշված է <<Էդվարդ Քոմփյութերս ՍՊԸ տնօրեն Ա. Մխիթարյան>>, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրմամբ հաստատված է այլ անձի կողմից, մինչդեռ ներկայացված չէ վերջինիս նման լիազորություն վերապահելու մասին լիազորագիր, հետևաբար մասնակցի հայտը մերժվել է գնահատող հանձնաժողովի կողմից:

3.4 <<ՏԵԽՆՈԼԱԲ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում գնային առաջարկը , հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և բացակայում է գնի առաջարկի տառերով տարբերակը և մասնակցի հայտը մերժվել է գնահատող հանձնաժողովի կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**4.Ոչ գնային պայմաններին բավարարող մասնակցների միջև բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին**

---

(Ռ. Խոջայան)

4.1 Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնման առարկայի նախահաշվային արժեքը.

4.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշման 44-րդ կետը՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու նպատակով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների միջև կանցկացվեն գների նվազեցման բանակցություններ: Սահմանված կարգով բոլոր մասնակիցներին 08.11.2016թ. ծանուցել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների անցկացման մասին, որը կանցկացվի 11.11.2016թ. ժամը 11:30-ին:

4.3 Գնման ընթացակարգը ընդհատել մինչև բանակցությունների նպատակով հրավիրված հանձնաժողովի նիստը՝ 11.11.2016թ. ժամը 11:30-ը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------ Ռ. Խոջայան

------------------------------ Ա. Բայբուրդյան

Անդամ՝

------------------------------ Ն. Քեռյան

------------------------------ Շ. Իսախանյան

------------------------------ Ա. Աշուղյան

Քարտուղար ------------------------------ Ն. Կիրակոսյան